

ПЕРИОДИЧЕСКО СЪИСКАНИЕ

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ԹԻԻ 12

27 ՅՈՒՆՎԱՐ 1898

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհայի համար

սարեկան 10 դր.

« «

վեցամսեան 5 «

սար երկիրներու համար

սարեկան 12 «

« « « «

վեցամսեան 6 «

Գրութիւնները եւ չին դարձուիր

վարչութիւն «խոսակի»

Բուշուֆ

Administration du «Khousag

Rousthouk

Отговоренъ-Редакторъ Д. Коларовъ.

Руссе, скоро-печатница на Ст. Ив. Ролевъ

ՆՈՐ

Ք Ն Ա Ր Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՆՊՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ

Այս երգարանը որ աւելէ առաջ 2, 20 ի կը ծախուեր, գնելով ի ոլոր յընակաները՝ դեղջեցինք զին, որպէսզի որքան կարելի է շուտ ու շատ տարածուի. կ'արժէ ամեն տեղի համար Քր. 1, 75

Դիմել գրավաճառ Գ. Տէօփէճեանի Բուսշուք:

Կը խորուի թերթս ընդունողներէ որ հաճին իրենց լաժնեգները ուղարկելու:

Թերթիս ձեւը փոխելով, առաջին ու վերջին երկու երեսները ծանուցումներու յատկացուցած ենք և կ'ընդունինք ծանուցումներ իւրաքանչիւր պարզ գիրի համար 1, իսկ զարգացիրի համար 2 անդիմ' ստանալով

ԽՈՒԶԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՅԱՆՁՆ ԿԱՌՆԷ ՏՊԱԳՐԵԼ

Հայերեն Պուշխարերեն եւ Յոսևներեն լեզուներով

ԱՅՅԵՏՈՐՄ, ՀՐԱԽՐԱՏՈՐՄ, ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ, ԵՒ ԱՅԼՆ

ԿԸ ՏՊԱԳՐԷ ՆԱԵԻ ԶԱՓԱԽՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳՐԲԵՐ ՈՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ

ՀՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԱՐ

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԵԱՄԲ ՇԱՐՍԱՅԱԾ

Ամերիկան՝ լուսի ու կրթութեան այդ աննման որրան-
նը, որու դարգացումին մասին առասպելներ կը պատմու-
ին՝ մեզ կը ներկայանայ շատ անգամ իր ծիծաղելի նախա-
պաշարումներովը: Հոս, կը գտնուին բարի մարդիկ՝ որոնք
ուզզամտութեամբ մ'իշխոններ դիպած են, ու կը
վայելեն Ամերիկայի հասարակութենէն՝ արդար, ուզզամիտ
եւ քրիստոնեայ քաղաքացիի համբաւը:

Ամերիկայի ժողովուրդը կ'ըսեն, այնքան ուզզամտու-
թեան սիրահար է որ, ճէյ Կուլտը մեռած ժամանակ եթէ
կտակ բրած ըլլայ եղբւր լաբենդատակ հաւատաւթեանց՝
չը պիտի բնդունին եղբւր վաշնդի, անիկա իր հարստու-
թիւնը անարդար ու անլարոյական միջոցներով ձեռք է
բերել: Ստուգիւ մարդ կ'ըսէին շանայ այս աստիճան մա-
քուր լարոյականի մը վրայ, որքան կը ծիծաղի այն յիմար
մտածումն համար, թէ ուզզամտութեամբ հարստացողներ
ալ կը գտնուին: Մենք թէպէտ եւ փորձը չը տեսնք,
բայց, իրաւամբ կը կարծենք որ, եթէ Կուլտը խոշորիկէկ
գումար մը կտակած ըլլար՝ Ամերիկայի ուզզամիտները
շնորհակալութեամբ պիտի բնդունէին դայն՝ Ս. Գիբբէն ալ
միտնաւոր յիշակ մը մէջ լերելով: Այս չէ խնդիրը
սակայն, այլ սա է թէ, ի՞նչ ըսել է ուզզամտութեամբ
հարստացած: Ամերիկայի հանրային մտքի գաղափարները
ճէյ Կուլտի կամ ձոն ճէքքայ Ասթորի, եւ Վանտէրպիլտի
կամ Ամոս Լորէնսի մասին՝ առջինները իլրեւ անարդար
ու անլարոյական միջոցներով հարստացող իսկ վերջիննե-
րը ուզզամտութեամբ՝ կը նմանի կառավարութիւններու
արդարութեան գաղափարներն, որ պատուաւոր կը ճանչ-
նայ, արդար կը հռչակէ եւ կը թոյլատրէ անիրաւ ուժի
մը այսինքն դրամին շնորհիւ առանց բան մը արտադրե-
լու՝ արտադրողներու քրտի՛գին արդիւնքը կողոպտող մե-
ծապատիւ վաճառականներն ու սեղանաւորները ու միւս
կողմէն կը դատապարտէ լեւը կամ գիշերը աւաղակութիւն

ընողը: Սակայն, քաղաքական, կրօնական ու լարոյական նախապաշարումներէ զերծ մտքերու համար աւելի մեծ գոյեր են օրէնքէն պաշտպանուած այդ մեծատիւները, քան թէ օրէնքէն դատապարտուած լեռնային ու գիշերային կողոպտիչները: Այսպէս ահա փիլիսոփայարար ու գիտնականօրէն դատելով՝ մենք Լօրէնս մը, Վանտէրպիլս մը իբրեւ կողոպտիչ՝ իրապէս ձէյ Կուլտէ մը չտարբերելէ զատ՝ քանի որ ասոնք ալ կը կողոպտեն հաւարակու թիւներ մը եւ նոյն անիրաւ ուժը տարբեր ձեւով կիրարկելով՝ անկէ աւելի փնասակար անգամ՝ կը գտնենք անոր համար որ այդպիսիներ հաւարակութեան ներկայանալով բարի, ուղղամիտ քրիստոնէի գիմակին տակ՝ անոնց ուշադրութիւնը կը վրիպեցնեն եւ ճշմարիտ ցատումը կը մարեցնեն բռնաւորներ ստեղծող ու գանոնք պահպանող օրէնքներու դէմ, մինչդեռ Կուլտ երեւալով հաւարակութեան կողոպտիչի որոշ գոյնով կըստիպէ գանի լրջօրէն խորհիլ գտնելու եւ բնաջինջ ընելու համար այն պատճառները՝ որոնցմէ կ'արտագրի մարդկային աղբը իբրեւ գերի՝ անխնայ գործածող Կուլտի նման լռնաւորները:

Կը զարմանանք թէ ամերիկայի ժողովուրդը եթէ հարուստները չը դատեր արդի գիտութեան ձեռք լերած ճշմարտութիւններով՝ գէթ ի՞նչու կը մ'ոհայ Քրիստոսի խոսքը, թէ «գիւրին է ուղտին աւելի ծակէն անցնիլ, քան մեծաօտան Արքայութիւն երթալ»: Այս ամէն ապարդ խոսքէն «րամալանօրէն միթէ անկասկած չի հետեւիլ, թէ անկարելի է երեւակայել հարուստ, որ իր հարստութիւնը ձեռք բերած ըլլայ ուղղամտութեամբ եւ արդարութեամբ եթէ չիտալ չէ որ արգայութիւն երթալու համար արդար եւ ուղղամիտ ըլլալ հարկ է:

ՀԱԿԱՅ ՔԱՅԼ ՄԸ

Ի՞նչ մեծ ազգակ մըն է սա ժամանակը: Անոնք որ ընկերային կազմակերպութեան բարեշրջումին նկատմամբ սկեպտիկ են, ու

անոնք որ կը խորհին թէ մարդկութիւնը լծացած ջուրի մը պէս պիտի պահէ իր արդի կարգն ու սարքը, թող իրենց աչուները իրենց շուրջը զարձակելու փորձութիւնը ունենան վայրկեան մը:

Զուիցերիայի այս պլտիկ ու սիրուն քաղաքը, ժընէվ, իր վերջին Պետական խորհուրդի (Conseil d'Etat) ընտրութեամբ մինչեւ հիմա նմանը չը տեսնուած երեւոյթ մը կը ներկայացնէ մեզի: Հոս, մարդկութեան մաս կազմող այս պզտիկ ընկերութիւնը, հսկայի քայլերով կը դիմէ այն նպատակին՝ ուր ուշ կամ կանուխ պիտի քալեն անհրաժեշտօրէն ամէն ընկերութիւն, իրենց գոյութեան յառաջացումին ու բարեկեցութեան իսկ համար, այն է անժառանգներու վիճակին բարւոքումը:

Այն գերաճգոտուած վիճակին մէջ ուր կ'ապրինք, տիրող դասակարգը, պուրժուազիւն, պէտք է զիջողութիւններու, արդար պահանջներու գոհացումով՝ թուլցնէ լարը, խզումը առաջ չբերելու համար:

Ժամանակը որ'չափ մեծ ամոքող մըն է ըսինք: Ասկէ տակաւին կէս դար առաջ ընկերվարութիւնը ոչ միայն խոշոր ու յիմար ցնորք մը նկատուած էր մարդկութեան ստուար մեծամասնութեանէն, այլ եւ այդ վարդապետութիւնը ներկայացնող մարդիկը կը ծաղրուէին ու նոյն իսկ կը հալածուէին: Ընկերվարական ըլլալ, ընկերութեան վնասակար անգամ մը ըլլալ կը նշանակէր. անկէ ի վեր որ'չափ փոխուած են ժամանակները: Ընկերվարութիւնը հիմա ոչ միայն ցնորք մը չէ, ընկերվարականը ոչ միայն վնասակար անգամ մը չի նկատուիր հիմա, այլ անիկա ամէն սահմանադրական երկիրներու խորհրդարաններուն մէջ իր ներկայացուցիչն ունի, իր շահերուն պաշտպանութեան համար իր բարենորոգողի ու յառաջդիմականի առողջ ձայնը հնչեցնելու համար:

Ժընէվը անաւասիկ քայլ մըն ալ կ'առնէ դէպի մեծ ու բարերար գաղափարներու իրականացումին համար, իր պետական խորհուրդի անդամներուն մէջ դնելով ընկերվարական մը. այսինքն պարզ լեզուով խօսելով, ժընէվի ընկերութիւնը զինքը կառավարելու համար, իշխանութեան գլուխ կը կանչէ անհատ մը՝ որ, ... ընկերվարական է:

Ու երբ աչունիս ետ կը դարձնենք այն ժամանակներուն՝ ուր ընկերվարականը՝ ցնորքներով լեցուած, վնասակար մարդ մը կը նկատուէր, ու այս ժամանակներուն՝ ուր ընկերվարականը առաջը գաղափարներով լեցուած, օգտակար մարդ մը կը համարուի, այս հակասութիւնը կը ցայտեցնէ լոյսի խոշոր ճառագայթ մը որուն մէջ կը տեսնենք ընկերվարական գաղափարներու բարեշրջումն ու յաղթանակը:

է՛հ, ընկերվարութիւնը ժընէվի մէջ գործադրուեց՞աւ, ընկերվարական մը Պետական խորհուրդի անդամ ընտրուելով, պիտի հարցնեն հեգնօրէն անոնք որ հակառակ են ընկերային հաւասարութեան գաղափարներուն, անոնք որ ներկայ կարգ ու սարքին անդրդուելի պաշտպաններն են, այսինքն մեր պոռթուանները:

Այսպիսիները որ քիչ մը առաջ նշանակած բարեշրջումիս կարեւորութիւնը ըմբռնելու ոչ բարի կամքը եւ ոչ յօժարութիւնը ունին ու կ'ուզեն գամուած մնալ իրենց հին, փռած համոզումներուն մէջ, այն պարզ պատճառով որ իրենց շահերը թոյլ չեն տար, թող հաճին վայրկեան մըն ալ ինծի մտիկ ընել:

* * *

1897 Նոյ. 7 ի կիրակի օրը, Զուիցերիայի ժընէվ նահանգը իր պետական խորհուրդի ընտրութիւնը կատարեց: Ամէն 3 տարին անգամ մը տեղի կ'ունենայ այդ կարգի ընտրութիւն մը. ժընէվի նահանգը կազմող համայնքները (commune) ընդհանուր քուէարկութեամբ (suffrage universel) եօթը հոգի կ'ընտրեն նահանգը ամբողջ կառավարելու համար: Եօթը հոգին զատ զատ իրենց բաժինը ունին կառավարումի գործին մէջ: Հետեւաբար 7 հոգիին կը համապատասխանէ 7 ը ճիւղ կամ բաժին (département):

1 Կրթական գործեր 2 Զինուորական գործեր 3 Արդարութիւն եւ ոստիկանութիւն 4 Հանրային գործեր 5 Ճարտարարուեստ եւ վաճառականութիւն 6 Ներքին գործեր 7 Ելեմուտք:

Ժընէվ քաղաքը երկու գլխաւոր կուսակցութիւն ունի. Պահպանողական եւ Արմատական: Այս երկու կուսակցութիւններու շուրջը կան ուրիշներ, ինչպէս Ընկերվարական կուսակցութիւնը, Ազգային կուսակցութիւնը որ կազմուած է կաթոլիկ դաւանանքի պատկանողներէն:

Իշխանութեան գլուխ կամ Պահպանողականները կ'անցնին, կամ Արմատականները: Կաթոլիկները, ճիշդ ինչպէս կ'ընեն հիմա Մէլիւի նախարարութեան, ուժ կուտային ու կուտան հոս պահպանողականներուն միայն, որովհետեւ իրենց շահերը այսպէս կը պահանջեն: Ընկերվարականները իրենց ձեռքը կ'երկնցնէին միայն անոնց որ իրենց գաղափարներուն աւելի մօտ են, յառաջիմական են, այսինքն Արմատականներուն, պահելով իրենց ինքնորոշութիւնն ու խաղալիկ չլլալով ոչ մէկ կուսակցութեան:

Հիմա այս պզտիկ ծանօթութիւններէն ետք դառնանք ընտրութիւններուն:

Պաշտօնը աւարտող Պետական խորհուրդը պահպանողականներէն կազմուած էր:

Արմատականները չուզեցին առիթը ձեռքէ փախցնել. պէտք էր կռուիլ ձախատ ձախառի, հետեւարար իրենց ուժերը զօրացնել հարկ էր. արգէն մօտիկ՝ ընկերվարականներուն իրենց գաղափարներով, խնդրեցին ասոնցմէ որ իրենց ուժ տան ընտրութիւններուն մէջ:

Ընկերվարական կուսակցութիւնը, բաւական կարեւոր, 1000 ձայնի ուժ մը կը ներկայացնէր: Ինքը չէր կրնար իր ուժը ձրի, արմատականներու տրամադրութեան տակ դնել, անոնց աղւոր աչքերուն համար միայն:

Կը գործակցինք ձեզի, ըսին ընկերվարականները՝ արմատականներուն՝ պայմանով մը: Ձեր ընտրութեան ցանկին մէջ պէտք է դնէք մեզմէ ներկայացուցիչ մը, այսինքն ձեզի հետ պիտի առնէք ընկերվարական մը նահանգը կառավարելու համար, երբ իշխանութեան գլուխ անցնիք:

Արմատականները ուրախութիւնով ու աւելցնենք, պարծանքով առին իրենց մէջ խելացի, կարող ու զարգացած ընկերվարական մը. Պ. Թիէպօ:

Պահպանողականներն է ընտրութեան առիթով իրենց ըրած ժողովներուն մէջ սկսան պռպուտ, արմատականներուն եւ ընկերվարականներուն վրայ յարձակիլ. ժողովուրդը զգուշացուցին արմատականներէն որ իրենց մէջ առած էին վնասակար (^{օօօ}) տարրեր, ընկերվարականներուն ակնարկելով, խենդ ու խելառ խօսեցան ու քիչ մնաց « ետք աշխարհք » պիտի ըլլայ ըսէին, եթէ արմատականները ընտրուին:

Արմատականները՝ իրենց ընտրութեան առիթով ըրած ճառերուն մէջ, թունդ կերպով յարձակեցան պահպանողական կուսակցութեան վրայ. իրենց պարագլուխը Պ. Ֆալօն, Ժընըվա աւատական թերթին խմբագրապետն ու աէրը, փառաւոր ատենաբանութեան մը մէջ, իրենց ընկերվարականներու հետ միութիւնը փառաբանելէ ետք, գրեթէ արգահատանքի խօսքեր ըրաւ անոնց նկատմամբ՝ որ Մեծ Հարցին առջեւ անտարբեր կը մնան, անժառանգներու խնդրով չեն հետաքրքրուիր: « Ժամանակին հետ չը քալողը ապրելու իրաւունք չունի ու չկրնար ունենալ, մենք մեր ձեռքը երիտասարդութեան կ'երկնցնենք, գործաւորին, արտադրողին կը մեկնենք, որովհետեւ ուժը անկէ կը բլլի, յառաջդիմութիւնը անկէ ծագում կ'առնէ »:

* * *

Հոռ, ինչպէս ամէն կուսակցութեան անդամները իրենց բանախօսութեան մէջ կրկնեցին, անձի վրայ չի դառնար խնդիրը:

զաղափարն է որ պէտք է յաղթանակ տանի, զաղափարն է որ պէտք է պարտուի: Արմատականները իրենց միացումով, ընկեր-վարականութեան պաշտպանը, տարածողը կը դառնային, եթէ ոչ իսկական ընկերվարականներ: Ու ընկերվարութեան համար հաւասարապէս նոյն է եթէ մէկը ինքզինքին տայ « ընկերվարա-կան » անունը կամ ոչ, բաւական է որ նոյն գործին աշխատակցի, ու ինքն ալ բերէ այն քարը որ պիտի բարձրացնէ Հաւասարու-թեան մեծ շէնքը:

Երկիրը զիրենք ընտրելով ընկերվարութեան ցուցուցած պիտի ըլլար իր համակրանքը, անոր միայն պիտի սար յաղթանակի դափնին:

Ամէն մարդ յորդող անհամբերութեան մը մէջ կ'ըսպասէր ար-գիւնքին. խանդավառութիւնն ու իրարանցումը, կէս գիշերուն իսկ կենդանութեան մէջ կը պահէին ժընէվը:

Յանկարծ յաղթանակի անսահման աղաղակը նետուեցաւ օդին մէջ, յորձանք տուաւ քաղաքին վրայ, արձագանգէ արձագանդ գը-նաց թափանցեց ամէն անկիւն, ժպտեցնելով անժառանգները ի-րենց խոնջէնքին մէջ. Մեծ Գաղափարը հիմա գիշերին խորունկ լուծեան մէջ կը սաւառնէր Թիբորէն ամբողջ նահանգին վրայ:

*
*
*

Կանի մը օր վերջը, երգումի սովորական արարողութեան ատեն, նոր ընտրուած Պետական խորհուրդի նախագահը ճառ մը կը կարդար, իրենց ապագայ գործունէութեան խոշոր գծերը թուելով

Դրադիրն ամբողջ ընկերական խնդրին շուրջը կը դառնար. ընկերվարական մը, նոյնիսկ ընտրուած պետական խորհրդականը, Պ. Թիէպօ, ասկէ աւելին չպիտի պահանջէր հիմնական հըս-կայի քայլն առնուած էր: Պուռժուաներուն աչքը լոյս:

Չմոռնամ ըսելու որ, ընտրութեան լուրը տարածուելուն պէս, բազմութիւնը, խանդավառութեան լայն շարժումի մը մէջ Պարոն Թիէպօի տանը առջեւ կը վազէր, եռանդաւոր ցոյց մը ընելու համար

Քուէի յաղթանակը՝ ծափերու խօլ պայթումին մէջ կաւարտէր:

97 Ժընեվ 30 Նոյ.

ՏԻԳՐԱՆ

ՏԻՊԱՐ ՏՋՐՈՒԿՆԵՐ

Եարգ մը մարդեր կան, քաղաքագէտ, ազնուաշուք, փորձառու, որոնք իրենց խելքին վրայ վստահ, ինչպէս իրենց փորին՝ հարցեր

կը վճռեն, կը կանխագուշակեն, ծանր ծանր, հատիկ հատիկ խօսելով ու ծիծաղելի յաւակնոտութեամբ մըն ալ բառերը շեշտելով:

—Արսէնեան էֆէնտի, կը կարգա՞ք կոր, գործադուլը ծանր հանգամանք մը կառնէ օր ըստ օր է:

—Ձէ', էֆէնտիմ, չէ'. ան ձերին գիտցածին պէս չէ, ծանր հանգամանք չառնէր ան: Վաղը միւս օր կը տեսնաք, նորէն բանւորները գործարանատէրերուն ոտքերը կը լնեն: Եը տեսնա՛ք:

—Բայց քանի որ ամեն կողմէ նիւթական ձեռնտուութիւններ չեն պակսիր՝...

—Ի՞նչուք պէտք է, դուն իմին ըսածիս նայէ. վաղը միւս օր այդ քանի մը սրիկաները նորէն իրենց վարպետներուն ոտքերը պիտի լցեն: Ձերին խելքը չը հասնիր էֆէնտիմ, աշխարհք ա՛յնչափ շուտ չը կրնայ փոխուիլ, չէ' :

Ու արսէնեան էֆէնտի կ'ըսկսի իրերուն մշտակայուն վիճակին վրայ ճառ մը խօսիլ, պաշտպանել ներկայ ընկերական գրութիւնը, զայն ճիշդ գտնալ ու անոր փոփոխումը անկարելի հռչակել:

Այս այն մարդն էր որ սագի զարմացումով ականատես ըլլալէն յետոյ, Պոլսոյ մէջ ամիրաներու կամայականութեանը խորտակմանը եւ Ազգ. սահմանադրութեանը հիմնումին, աքաղաղի ապշութիւնով տեսած էր Պուլկարիոյ ազատութիւնը: Ու, երբ, մեր աշխարհաբարը, պատմական անխուսափելի օրէնքով մը, յաղթանակ տարաւ հին գրաբարին, Արսէնեան էֆէնտի, պահ մը իր խելքին վրայ տարակուսելով, մրմնջած էր ինքնիրենը «էֆէնտի՛մ ասոնք ըլլալու բաներ չեն, ամմա...ամմա...»:

Քաղաքակրթութիւնը կը քալէ, մարդկային ընկերութեան մէջ, վիճակները հեազհեաէ կը փոխուին, զարգացումը՝ իրեն հետ կը բերէ աւելի լայն ու աւելի արդարացի պահանջներ: Այդ պահանջներուն զաղափարը, իր ծնունդին մէջ իսկ, արդէն գործադրուած ըսել է: Զարգացումը կը լայննայ, յեղափոխիչներու հոսանքը կը ստուարանայ, եւ ահա «իտէալ» ը օր մը իրականացած: Ան աւտեն Արսէնեանները, իրենց հիասթափումի ապուշ զարմացումներուն մէջ մեր ծիծաղը ու մեր արհամարանքը միայն կրնան չարժել:

Եւ յետոյ, անբան էակներ են ատո՛նք, որոնք կ'ապրին, յաւակնոտ յամառութեամբ մը, մտաւորական հայեացքներու բացարձակ ազդատութեան մը մէջ, իրենց ողորմելի փիլիսոփայութիւնը սալոնէ սալոն քաշքշելով: Իրենց կեանքը, մութին մէջէն կ'անհետանայ, այն ուլախութիւնը, այն միակ մեծագոյն ուրախութիւնը, որ կ'ողողէ, աչքը ապագային վրայ՝ հանրօգուտ գաղափարի մը իրականացումին համար աշխատողի մը սիրտը, չէ անցած երբէք իրենց սիրտէն: Մարդկային ընկերութեան մէջ, ուրիշ զեր

մը չեն ունեցած, բայց եթէ դերը իրենց փորը ուռեցնելու մական-
բոյժ կենդանիի մը զագրելի կեանքը ապրելով:

* * *

Պատմութիւնը կը դատապարտէ զիրենք ու իրենց յետագէմ
ձգտումները, բայց, կարգ մըն ալ մարդեր կան, որոնք իրենց ան-
պէտ գոյութիւնը պահպանելու համար, պատմութիւնն իսկ կը
դրժեն երկինք բարձրացնելով այդ « թաղական » ազնուաշուքները:

... Հարուստ, լեզուազէտ եւ հետեւաբար զարգացած ^(°) անձ-
նաւորութեան մը զագաղին գլուխը մարդ մը կ'եցած է ահաւասիկ:
Իրեն սեւ շուրջաւը ու միջնադարեան վեղարը դէմքին կեղծաւո-
րութիւնը կը շեշտեն: Եպիսկոպոս մըն է:

Եկեղեցիին մէջ, ձեռքի լայն շարժումներով, բառերու ուռու-
ցիկ հնչականութիւններով, ողորմելի ու հասարակ կրկնութիւն-
ներով, քրտինքներով, ճիգերով « մեռեալ անձնաւորութեան » ը
բարի վարքը ու պատկառելի պարկեշտութիւնը կը նկարագրէ.
Իրեն խանդը կը կրկնապատկուի, կ'եռապատկուի մանաւազ ա՜ն
ատեն, երբ, իր երեւակայութեանը մէջ, մերթ ընդ մերթ, մերձա-
կայ քանի մը կլօրիկներ իրենց պայծառ գեղութիւնը կը շողա-
ցնեն. . . :

Ու այսպէս մի'շտ սուտ է, մի'շտ խարուսիկ դիմակի մը տակ,
անո'նք անամօթ տղրուկներն են, որոնք ժողովուրդին սպիտու-
թիւնը կը սնուցանեն իրենց գոյութիւնը հեշտօրէն պահպանելու
համար: Ամենէ'ն դարչելի, ամենէ'ն վատ դաւաճանները՝ որոնք,
սիրող նախապաշարումներէն կ'օգտուին, փոխանակ իրենց կոչու-
մը, իրենց մարդկային պարտականութիւնը, իրենց դերը կատա-
րելու:

Իրենց նշանաբանը ամէ'ն դժբաղդութեան, ամէ'ն անիրաւու-
թեան հանդէպ սա չէ՞ « Աստուծոյ կամքը ասանկ է եղեր »: Իրենք
չեն՞ որ ձակատագրականութիւն կը քարոզեն, իրենք գիտութեան
ժխտիչ վարդապետները:

Ժամանակը կ'անցնի սակայն, հանրային զարգացումը օր մը
կը վռնտէ մարդերու մորթին փակչած այդ բաղդախնդիր տղրուկ-
ները, որոնք, այս օր, կրօնքը արհեստ ըրած, օղային երազի մը
վարդագոյն հեռանկարովը կ'օրօրեն ամբողջ մարդկութիւնը:

Խ. Թ

ՄԱՐԴԻԱՅԻՆ ՎԱՅՐԱԿՈՒԹԻՒՆԸ

« Կեանքը զուտ չարչարանք՝ եւ գոյութիւնը չարիք մըն է »

ըսած է Շօբէնհաւը: Անտարակոյս Տանձիկի յոռետես զաւակը իր բոլոր ուժով պիտի պոռար եւ յամառ կերպով մեղի դեռ պիտի կրկնէր իր այս վճիռը, եթէ տակաւին ապրէր ու ականատես ըլլար այն սոսկալի կոտորածներուն, այն եղբայրասպան կռիւներուն ու պատերազմներուն որոնք 19րդ դարու սա զառամ ծերութեանը մէջ իսկ պատահեցան եւ որոնք շատ մը քաղաքներ նախճիրներու արիւնշուայ գաշտի մը փոխակերպեցին:

Իրաւ որ ի՛նչ յուսահատեցուցիչ զազանութիւններ էին որ կատարուեցան, ի՛նչ ամօթալի տեսարաններ՝ որոնք պարզուեցան ու կը պարզուին ամէն օր:

Ինչ չենք մոռցած, եւ չենք կարող մոռնալ, Հայաստանի մէջ համարձակ ու անպատիժ ի գործ դրուած դարավերջիկ, հրէշային խժոժութիւնները՝ զորս մարդկային ծայրագոյն ու մոլեգին վայրագութիւնը միայն կրնայ հնարել այնպէս:

Չենք կրնար մոռնալ այն դարհուրելի թշուառութիւնները որոնց մատնուած է տակաւին Հայ ժողովուրդը, որ՝ անզօրին յատուկ համակերպութեամբ եւ զսպուած կատաղութեամբ, հանապազօրեայ վախ ու դողի մէջ, հաւատաքննական զժոխային օրեր կը բոլորէ կիսաւեր երկրի խուլ անկիւնները: Անկարելի է մտքէ հանել այն շնական արհամարհանքը եւ դիւական հրճուանքը որով մեծ ու շուսառորտած ուրիշ ազգեր ծաղրեցին ազատութեան ցանկացող դժբաղդ հայերու անսահման զոհողութիւնն ու հիանալի անձնուրացութիւնը, անտարբերութեամբ դիտեցին եղեռնական զէպքերու անընդհատ թաւալումը, եւ, անզգայ դիակի մը վայել լռութեամբ, կատարուած միջնադարեան վայրենութիւնները վաւերացուցին:

Եւրոպեայի սարսափելի աղէտներու երկարածիկ շարք մըն էր որ քակուեցաւ եւ ահա Նրէտէն ու Յունաստանը երկրորդ թատերաբեմ մը հանդիսացան անսիրտ սպանութեանց եւ ճիւղաղային անդիմութեանց:

Թրքական բռնակալութիւնը ուղեց հայ դիակներու քսամներէ յիշատակը լուալ Հելլէններու տաք արիւնին մէջ եւ, նորանոր կոտորածներով, մարդկային բնութեան ապականուած ու վայրենի յատկութիւններուն անհերքելի ապացոյցներ սուլաւ աշխարհին:

Եւրոպական զօրութիւնը՝ ծայրայեղ եսամոլութեամբ եւ անարգ չահադիտութեամբ, ինպատու բռնաւորութեան, չարաչար կաշկանդեց ապստամբ կրէտացիները որոնք 100 տարուան մէջ 7 անձնուրաց յեղափոխութիւն ունեցան եւ որոնց իղձերն ալ, մերթնեւրուն պէս, արիւնի ճահիճներով ծածկուեցան միշտ:

Միւս կողմէն, տաճիկ աշուղը՝ զգուելի անարտուրեամբ, մա-

հիկին յաղթանակը երգեց եւ բռնաւորը՝ չփայցած իր բարբարոս բանակներու գարշելի սխրագործութիւններէն՝ հարէմական հեշտօրօր անուրջներու մէջ, պահ մը, տխմար յաւակնութեամբ, մինչեւ իսկ երազեց հաճայն իսլամական պետութիւն մը հիմնել՝ Հնդկաստանէն մինչեւ Մարոք, Գանգէսի ափերէն մինչեւ Ատլանտեան տարածուած:

Եւ սուլթանական այս ծիծաղաշարժ զառանցանքը առանց հետեւանքի չի մնաց: Անիկա արձագանք գտաւ Հնդկաստանի խորերը, ուր Ալլահի հաւատացեալ երկրպագուները փորձեցին խլըրտումներ հանել, որով անգղիական սուրը կարգ առաւ մարդկային ուրիշ կեանքեր անչնչացնելու:

Մեր յիշողութեան մէջ գեռ թարմ կը մնային այս սարսափարկու ոճրագործութեանց տխուր ու սգալի յիշատակները, երբ հեռագիրները հաղորդեցին, թէ Պարսկաստանն ալ կ'ուզէ իր բաժինն ունենալ այս անխիղճ եւ հակամարդկային բարբարոսութեանց մէջ:

Հոն ալ դարձեալ հայը թալանեցին, հոն ալ մեր համարիւն եղբայրներու աղետարչ կաղկանձունը լսուեցաւ դժբաղդաբար:

Իրերու այս ընթացքին մէջ, խորհիլ, թէ հայ ժողովուրդին հաւանկերսիչ միայն կը մնայ, ոճիր մըն է պարզապէս, սակայն այս կէտին վրայ ծանրանալ մեր նիւթէն դուրս է առ այժմ:

Ամէն քիչ ու շատ զգացում ունեցող մարդ՝ կը կարծենք, թէ կարող չէ երբէք պաղարիւն մնալ բոլոր այս անսանձ գազանութեանց առջեւ որոնք՝ ամէնքն ալ՝ ծնունդ են աշխարհիս ներկայ տխմար կազմակերպութեանը եւ որոնք բնաւ չպիտի վերջանան, մինչեւ որ ժողովուրդներու ճշմարիտ փրկագործութիւնը իրականութիւն չի գտնէ:

Ըսածնուս անժխտելի ճշմարտութիւնը հաստատելու համար ապացոյցներ փնտռելու պէտքը չունինք բնաւ: Յաւալի դէպքեր՝ ամէն օր, իրարու ետեւէ, կուգան արդէն վկայելու թէ աղգեր ու ժողովուրդներ իրար զիրար յօշօտելու ամենասոսկալի ախտով մը վարակուած են եւ մարդուս կեանքին գինը, աւելի քան երբէք, աժանցած է անա՛նկ որ սպանութիւնն ու սոսկալի եղեռնագործութիւնը սովորական դարձեր են ալ եւս:

Դաղաքակրթութեան երկու հզօր ներկայացուցիչ մեծ ազգերու, Ֆրանսայի եւ Անգլիոյ, բանակներն էին որ 15 օր առաջ, Նեկիլէի մօտ, ափ մը հողի համար հրացանի գնդակներով գետին տապալեցին մէկ մէկու դիակ: Նոյնպէս, քանի մը շաբաթ առաջ, Աւստրիական ժողովուրդն էր որ զօրքերու հետ ընդհարում ունեցաւ՝ որուն հետեւանքով մէկէ աւելի կեանքեր զոհ գացին դարձեալ

Եւ գեռ վերջերս նոր բօթ մը հասաւ, թէ Պուքրէշի մէջ

Ռուսներն ու Հրէաները ընդհարումներ ունեցած են, իրարու արիւն խմելու չափ վայրենութեամբ:

Ու տակաւին ի՛նչ անակնկալներ արդեօք պահած չէ մեզ քաղաքական աշխարհը որուն հորիզոնը սպառնալից կը թուի միշտ, որչափ ալ դիւանագէտները ճիգ թափեն կլլեցնելու, թէ ամէն վտանգ անցած է:

* * *

Մարդկային ազգի այս անկերջ ու անսպառ ցածուծիւններուն հանդէպ, կանուխէն ի վեր եղած են իմաստասէրներ որոնք կը պնդեն, թէ մարդ էակը էապէս եւ անուղղելի կերպով չար է, ու իր մէջ կը կրէ ամէն տեսակ եղեոնական ձգտումներու անջնջելի սերմը: Կը պնդեն, թէ ամէն վատազգի կիրքեր յաղթական կերպով կը գործեն մեր ներսիդին եւ, հետեւաբար, մարդն է միակ պատասխանատու հեղինակը այն բոլոր վայրագութեանց ու թրշուռութեանց որոնցմով լցուած է բովանդակ աշխարհը:

Եղած են նոյնպէս նշանաւոր գրողներ որոնք բացարձակապէս յայտնած են, թէ մարդը՝ ինքն իսկ է որ կը մերժէ իր սեփական երջանկութիւնը, ուստի ենթակայ է ու ենթակայ պիտի մնայ ամէն տեսակ դժբաղդութեան ու տառապանքի:

«Կեանքը տանջանք մըն է եւ չի կրնար ուրիշ բան ըլլալ» կ'ըսէ անգլիէն Հարթմանն ալ:

Ու դեռ կը գտնուին շատ մը ցաւազար միտքեր ալ որոնք պատերազմներն ու թշուառութիւնները բնական եւ յաւերժական կը գտնեն, ու նախապաշարում մըն ալ ունին, թէ մարդս՝ Ազամի մեղքէն ի վեր՝ դատապարտուած է յաւիտեան չարչարուելու:

Արդարեւ անհերքելի է, թէ հիմակուան մարդը՝ ընդհանուր կերպով՝ բոլորովին ապականուած, ստորնութեան հրէշ մը դարձած է որ ընդունակ է ամէն տեսակ ազտոտութեանց մէջ թաթաղուելու:

Թող որքան կ'ուզեն, պոռան ու կանչեն բարոյականի վարդապետները թէ սպաննելը մեղք է, ստելը յանցանք է: Թող մարդիկ բանտերու մէջ չարչրկեն եւ կախաղաններու վրայ խեղդեն ոճրագործը, նորէն ամէն օր սպաննութիւններ ու ոճիրներ անպակաս ի գործ կը դրուին եւ ո՛ր կողմ ալ դարձնենք մեր աչքը, նորէն մարդկային կարմիր արիւնի թանձր կայսակներ կը տեսնենք թափուած:

Թող սրբազան բեմերէ, անդադար, մարդերու տիեզերական եղբայրութիւնը քարոզեն դպիրներն ու փարիսեցիները, նորէն ազգերը չպիտի դադրին անեղ սպառազինութիւնով պարապելէ

որպէսզի օրին մէկը զիրար խողխողեն:

Թող Սինայի պատուիրանները հազարաւոր տարիներ պաշտուած միան, թող անոնք հրամայեն չի գողնալ, չի խաբել ու չի կեղծել, նորէն մարդը ոսկիէ հորթին երկրպագութիւն կ'ընէ, նորէն գողութիւնները վերջ չեն ունենար եւ նորէն սուտն ու խաբէութիւնը ընդունուած օրէնք կը միան կեանքի անողոք պայքարին մէջ:

Եւ մենք, եթէ ողջ միանք, տակաւին շատ աղէտներու, շատ արիւնհեղութիւններու եւ վայրագութեանց հանդիսատես կ'ըլլանք անշուշտ:

Բայց իրա՞ն է արդեօք, թէ աշխարհիս բոլոր այս ապականութեանց միակ աղբիւրը ուղղակի եւ բնական կերպով մարդուս սրտէն կը բղխի:

Իրա՞ն է, թէ մարդ էակը անպայման եւ իծնէ չար է արդեօք:

Փութանք ըսելու որ այս հարցումներուն դէմ մեր պատասխանը ժխտական է բոլորովին եւ մենք բացարձակապէս տարբեր տեղ կը տեսնենք բոլոր չարիքներու արմատը, զոր պիտի ջանանք ցոյց տալ գալ անգամով:

ՎԱՀԱՆ, ՇԱՀՐԻՄԱՆ

« Խուզակի » նպատակը ըլլալով, ըկերվարական փրկարար գաղափարներուն տարածումովը դիւրացնել անոր յաղթանակը, եւ քաջ գիտնալով որ՝ գործառնական ընկերութիւնները ընկերվարութեան համար այն կազմակերպուած բանակները պիտի ըլլան, որոնց դիմ օրին մէկը Բրուշեան քննաւնդներն անգամ չպիտի կրնան խօսիլ՝ առաջադրած ենք գաղափարակից ընկերներու հետ հրաւիրել Հայ գործաւոր ու ծառայ դասակարգը այժմէն ըսկսիլ այդօրինակ կազմակերպութեան մը:

Այս նիւթին վրայ յաջորդ թիւով պիտի երեւայ Պր. Վահան Շահիբխանի մէկ յօդուածը, ուր ընդարձակ կերպով բացատրուած պիտի ըլլան անոր պէս պէս օգուտները քե ներկային եւ քե ապագային համար:

ԱՇԽԱՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ

Իտալիոյ մէկ նահանգին մէջ վերջերս ժողովրդային ընդհանուր ցոյց մը եղած է աշխատութիւն եւ հաց պահանջելու նպատակով: Թշուառներն ու անօթիները՝ որոնք ամէն տեղի պէս հոն ալ մեծամասնութիւն կը կազմեն միացած իրենց զգոհութիւնը կը յայտնեն հրապարակով եւ աղաղակելով « աշխատութիւն եւ հաց »

Յայտնի ընկերվարական օրաթերթ Լա թրքիթ ռեփիւպլիք էն կիմանանք թէ զօրքերը միջամտած են այս գործին եւ ցուցարարները ցրուելու պատրուակով բաւական կսկծալի արիւնհեղութիւն ներու եւ քստմեկի վայրագութեանց պատճառ եղած են:

Ժ. Պ. Գլէման այս առիթով ոտանաւոր գրած է հետեւեալը զոր թարգմանաբար կը հաղորդենք մեր ընթերցողներուն:

«Այն երկրին մէջ ուր երկինքը կապոյտ է եւ գիշերները աստեղազարդ են միշտ, ուր շատ կը խօսին մարդիկ բարի Աստուծոյն եւ անարատ Ս. կոյսերուն վրայ:

Ժողովուրդը անօթի է, վայրձագ ու տոգոյն թշուառութեան երեսէն. անիկա աշխատութեան ու հացի համար կռուի աղաղակը բարձրացուցած է:

Գործաւորները եւ գիւղացիները՝ միեւնոյն դժբաղդութեամբ իրարու միացած, ընդ քարշ բերելով իրենց կիւնն ու իրենց զաւակները, այսօր հասարակաց դատ մը կը վարեն:

Ժողովուրդը անօթի է, ...

Անոնց արիւնը ակօսները կարմրցուց, որովհետեւ հրացանները հրաշք գործեցին. ձրիակներն ու իշամեղաւները միացած կոտորեցին մեղրաչէն մեղունները.

Ժողովուրդը անօթի է, ...

Ո՛վ թշուառներ, հիւր որ անօթութեան համար ձայն կը բարձրացնէք, ինչպէս Ֆրանսայի մէջ եւ ինչպէս ամենուրեք ահա՛ այսպէս կ'ըսպանեն զձեզ.

Ժողովուրդը անօթի է, ...

Ամէն երկրի մէջ կատաւարողները՝ ամբոխին հեծեմունքը հանդարտեցնելու համար հրանիւթերու վրայ միայն կը դնեն իրենց յոյսը:

Ժողովուրդը անօթի է, ...

Աւելի ուժով պոռացէք կեցցէ թագաւորը, Պապը եւ Ս. կոյս Մարիամը, բայց, յանուն օրէնքին, ծոմ պահեցէք Իտալիոյ գեղեցիկ երկինքին տակ:

Ժողովուրդը անօթի է, ...

Եթէ պիտի ծակեն մեր մորթը մեր կողին, ջանանք որ մեզի օգտակար ըլլայ այն. միեւնոյն դքօշակին տակ յառաջ քալենք ո՛վ Ֆրանսայի եւ Սիկիլիայի չքաւորներ

Ժողովուրդը անօթի է, ...

Եւ ամենքս ոտքի ելած ու ամենքս միացած, վերջնական պարին համար աղաղակինք. պատե՛րազմ ընտաւորներուն, մեր թըշնամիներուն, դէմ. կեցցէ միջազգայնութիւն:

Ժողովուրդը անօթի է, վայձագ ու տոգոյն թշուառութեան երեսէն. անիկա աշխատութեան ու հացի համար կռուի աղաղակը բարձրացուցած է: »

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

ՄԱՐԴՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վէպ իրական կեանքէ, որ կը պատկերաբնէ միջավայրի
ո՛հ մ'ը, որուն նմանները դժբաղդաբար լաղմաթիւ են:

Գին 50 ՍԱՆԹԻՄ

Դիմել Գ. Տէօֆմէճեանի ի Րուսշուք:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԿԱՂԱՆԳՉԷՔ

Վիպակ բանաստեղծական

Գին 30 ՍԱՆԹԻՄ

Դիմել Հեղինակին «Վառնա Հայկական Ընթերցարան»

ԵՐԳԱՐԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԴԻՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

ի պէսս

ՓՈՐՐԻԿ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ
լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը տարունակէ մանկա-
կան դուարձալի երգեր ու քանի մ'ը ոտանաւոր առակներ
և կրնայ երախաներուն ծառայել նաեւ իւր բնութեցանու-
թեան գիրք որուն տարունակութիւնը ոչ ունցուցիչ և
հրաշանգիչ է միանգամայն ա՛նոնց համար:
Թուղթը ընտիր է, ապագաութիւնը՝ մալուր և կաղմ
վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան, Չրդ. Թալ, Թիւ 11)4: